4235

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՆ-ԳՀԾ-2021-1

«25» հունվարի 2021թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս **գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյանի**, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ն,** այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն **Տիգրան Հովհաննիսյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշման 9-րդ կետի «բ» ենթակետի 1-ին պարբերությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի **2021 թվականի հունվարի 14-ի N 6-Ա** հրամանը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել **փորձաքննությունների կատարման ծառայություններ՝ դատական փորձաքննությունների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով** և սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել փորձագետի կողմից՝ սույն պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարված եզրակացությունն ու վճարել փորձաքննության կատարման ծառայությունների գինը:

1.2. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության կատարումը հանձնարարում և փորձաքննության կատարման արդյունքում կազմված եզրակացությունն ընդունում է տվյալ փորձաքննության անցկացումը նախաձեռնողը՝ դատարանները (քրեական գործերով), քրեական հետապնդում կամ վարչական վարույթ իրականացնող մարմինները, որոնք ի պաշտոնե հանդիսանում են Պատվիրատուի ներկայացուցիչը:

1.3. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության բովանդակությունը որոշվում է փորձաքննությունը նախաձեռնողի՝ տվյալ փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունել Ծառայությունը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել լրացուցիչ փորձաքննություն՝ բացթողումը լրացնելու նպատակով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2 (երկու)** օրինակ (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **220663400 (Երկու հարյուր քսան միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:**

4.2 Ծառայությունների մատուցման գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարներ, ինչպես նաև Կատարողի կողմից սույն պայմանագրով իրականացվող փորձաքննությունների համար իրականացված ծախսերը: Փորձաքննությունների, ըստ տեսակների, կատարման ծառայությունների գինը որոշվում է ըստ սույն պայմանագրի հավելված N 1-ի միավոր գների:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Ծառայությունը մատուցվում է 0 (զրո) տոկոս շահույթով:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **29.12.2021թ.:**

4.4 Եթե Պատվիրատուի հանձնարարությամբ կատարվում է լրացուցիչ փորձաքննություն՝ Կատարողի կողմից բացթողումը լրացնելու նպատակով, ապա մատուցված ծառայության համար վճարում չի նախատեսվում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 **Սույն պայմանագիրն ունի հետադարձ ուժ, տարածվում է 2021 թվականի հունվարի 08-ից (ներառյալ) սկսած Պատվիրատուի և Կատարողի միջև սույն պայմանագրով ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ

որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 9 (ինը) էջից՝ ներառյալ Հավելվածները, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	**«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ**
ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8	**ք. Երևան, Արշակունյաց 23,**
ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	**ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ**
Հ/Հ 900011194181	**Հ/Հ 900018003146**
ՀՎՀՀ 02506264	**ՀՎՀՀ 02512069**
(ստորագրություն)	
Կ.Տ.	

Հավելված N 1

« » հունվարի 2021թ. կնքված
N ՀՀԱՆ-ԳՀԾ-2021-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆԸ)

Գնման առարկայի անվանումը	Փորձաքննության տեսակը	Փորձագիտական աշխատանքի նորմատիվային ժամանակը, (ժամ) *	Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը, (ՀՀդրամ)**	Միավորի նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)	Քանակը (հատ)	Ընդամենը նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
Փորձաքննությունների ծառայություններ	**Ձեռագրաբանական**	45	560	25200	**684**	**17236800**
	Փաստաթղթաբանական, այդ թվում՝	60	560	33600	**615**	**20664000**
	- փաստաթղթի պատրաստման եղանակի և վավերապայմանների	60	560	33600	315	10584000
	- փաստաթղթի նյութի	60	560	33600	300	10080000
	Հետքաբանական, այդ թվում՝	45	560	25200	**548**	**13809600**
	- մարդու կողմից թողնված հետքերի	45	560	25200	20	504000
	- առարկաների, գործիքների հետքերի	45	560	25200	245	6174000
	- տրանսպորտային միջոցների հետքերի	45	560	25200	245	6174000
	-դրոշմանիշերի, դրոշմապիտակների, դրոշմված նշագրումների	45	560	25200	10	252000
	- սառը և նետողական զենքերի	45	560	25200	28	705600
	Ֆոտոտեխնիկական	90	560	50400	**4**	**201600**
	Դիմանկարային	90	560	50400	**50**	**2520000**
	Ձգաբանական, այդ թվում՝	60	560	33600	**575**	**19320000**
	- հրազենի և զինամթերքի	60	560	33600	275	9240000
	- կրակոցի հետքերի և արգասիքների	60	560	33600	300	10080000
	Պայթյունատեխնիկական, այդ թվում՝	90	560	50400	**103**	**5191200**
	- պայթուցիկ սարքավորումների և զինամթերքի	90	560	50400	40	2016000
	- պայթյունի հետքերի և արգասիքների	90	560	50400	60	3024000

-վառոդների, հրատեխնիկական բաղադրիչների և դրանց այրման հետքերի	90	560	50400	3	151200
Նյութագիտական, այդ թվում՝	60	560	33600	**699**	**23486400**
- լաքաներկերի և ծածկույթների	60	560	33600	200	6720000
- նավթամթերքների և քսայուղերի	60	560	33600	150	5040000
- սպիրտ պարունակող հեղուկների	60	560	33600	60	2016000
- ապակու, ապակենման նյութերի, սիլիկատային նյութերի	60	560	33600	5	168000
- միներալների, բնական ու թանկարժեք քարերի	60	560	33600	70	2352000
-պլաստմասսաների, ռետինի և այլ պոլիմերային նյութերի	60	560	33600	5	168000
-մետաղների և համաձուլվածքների	60	560	33600	200	6720000
-այլ նյութերի	60	560	33600	9	302400
Կենսաբանական, այդ թվում՝	60	560	33600	**739**	**24830400**
-բուսական ծագման օբյեկտների	60	560	33600	150	5040000
-կենդանական ծագման օբյեկտների	60	560	33600	5	168000
-թմրամիջոցների և հոգեմետ դեղամիջոցների	60	560	33600	504	16934400
-մանրաթելերի ու գործվածքների	60	560	33600	50	1680000
-հողագիտական	60	560	33600	30	1008000
Սննդային	60	560	33600	**4**	**134400**
Տեսաձայնագրառման, այդ թվում՝	120	560	67200	**188**	**12633600**
-ձայնի և հնչած խոսքի	120	560	67200	40	2688000
-ձայնագրվածքի ձայնային միջավայրի, պայմանների, միջոցների, նյութի և հետքերի	120	560	67200	8	537600
-տեսագրվածքի պատկերի, պայմանների, միջոցների, նյութի և հետքերի	120	560	67200	140	9408000
Հրդեհատեխնիկական, այդ թվում՝	90	560	50400	**201**	**10130400**
- հրդեհատեխնիկական	90	560	50400	150	7560000
- էլեկտրատեխնիկական	90	560	50400	51	2570400
Շինարարատեխնիկական, այդ թվում՝	60	560	33600	**283**	**9508800**
-շինարարատեխնիկական	60	560	33600	200	6720000
-անշարժ գույքի գնահատման	60	560	33600	83	2788800
Ճանապարհատրանսպորտայի ն պատահարների հանգամանքների	30	560	16800	**320**	**5376000**

Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի	90	560	50400	**268**	**13507200**
Տրանսպորտային հետքաբանական	90	560	50400	**49**	**2469600**
Տնտեսագիտական, այդ թվում՝	180	560	100800	**209**	**21062600**
-հաշվապահական	180	560	100800	140	14107400
-ֆինանսատնտեսագիտական	180	560	100800	69	6955200
Ապրանքագիտական, այդ թվում՝	30	560	16800	**581**	**9760800**
-ապրանքի գնահատման	30	560	16800	300	5040000
-գույքային վնասի չափի որոշման	30	560	16800	200	3360000
-որակի	30	560	16800	81	1360800
Համակարգչային-տեխնիկական, այդ թվում՝	150	560	84000	**105**	**8820000**
-համակարգչային-տեխնիկական /ցանցային հետազոտություն/	150	560	84000	5	420000
-համակարգչային-տեխնիկական /ծրագրերի հետազոտություն/	150	560	84000	5	420000
-համակարգչային-տեխնիկական /ինֆորմացիայի հետազոտություն, վերականգնում/	150	560	84000	85	7140000
-համակարգչային-տեխնիկական /համակարգչային սարքավորումների հետազոտություն/	150	560	84000	10	840000
Ընդամենը				**6225**	**220663400**

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	**Ավարտը**
08.01.2021թ. (ներառյալ)	**24.12.2021թ. (ներառյալ)**

* Յուրաքանչյուր տեսակի փորձաքննության ծառայության մատուցման նորմատիվային ժամանակները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 2-ի N 79-Ն որոշման:

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2021 թվականի հունվարի 14-ի N 6-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը սահմանվել է 560 դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության

ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց 23
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003140
ՀՎՀՀ 02512069

(ստորագրություն)

Հավելված N 2

« » հունվարի 2021թ. կնքված
N ՀՀԱՆ-ԳՀԾ-2021-1 պայմանագրի

N ՀՀԱՆ-ԳՀԾ-2021-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	Փորձաքննությունների ծառայություններ	55171200	55171200	55171200	110594400	110594400	110594400	165547200	165547200	165547200	220663400	220663400	220663400	220663400 (Երկու հարյուր քսան միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն

ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց 23
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003148
ՀՎՀՀ 02512069

(ստորագրություն)

Հավելված 3
« » հունվարի 2021թ. կնքված
N ՀՀԱՆ-ԳՀԾ-2021-1 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն

Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ900011194181
ՀՎՀՀ 02506264

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄ
«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
Ք.Երևան, Արշակունյաց 23,
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2021 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Փորձաքննությունների կատարման ծառայությունների մատուցում**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_ » 2021 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ՝ «____» «_____» 20 թ. Դուրս գրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները.

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկականբնութագրիհամառոտշարադրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարմանենթակագումարը /հազարդրամ/	Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/
			ըստպայմանագրովիաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովիաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.